

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

կուսակցության 3-րդ (արտահերթ)  
համագումարի 2007թ. փետրվարի 15-ի

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
ԿՈՂՄԻՑ «18».06. 2004թ.

որոշմամբ

գրանցման թիվ 211.172.02701  
վկայական 03 Ա 065165

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»

Թիվ \_\_\_\_\_ ' \_\_\_\_\_ փոփոխությունը  
գրանցված է ՀՀ իրավաբանական  
անձանց պետական ռեգիստրի  
կենտրոնական մարմնի կողմից

կուսակցության նախագահ

" \_\_\_\_\_ "  
2007թ. \_\_\_\_\_

----- Գագիկ Ծառուկյան

ՀՀ պետական ռեգիստրի ղեկավար

----- Մ. Մարտիրոսյան

**«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

(Նոր խմբագրություն)

## ԵՐԵՎԱՆ 2007

*«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստեղծվել է ժողովրդին ծառայելու, նրա համար արժանավայել կյանք ապահովելու – մեր հայրենիքի բարգավաճմանն իր նպաստը բերելու նպատակով:*

*«Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամներին միավորում են ազատության, արդարության, համերաշխության – հայրենասիրության գաղափարները: «Բարգավաճ Հայաստանը» վճռական է այս արժեքները պաշտպանելու եւ տարածելու հարցում:*

*Հայաստանի առջ- ծառացած հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն ժողովրդի վստահությունը վայելող, բարձր արժեքներ, ազնիվ նպատակներ ու վեհ գաղափարներ դավանող անհատների – քաղաքական ուժերի համախմբման ու համագործակցության պարագայում: Երկրի քաղաքական համակարգում «Բարգավաճ Հայաստանն» իր առաքելությունը տեսնում է հենց այդ համատեքստում – հանդես է գալու քաղաքացիական համախմբվածության ու համերաշխության դիրքերից:*

*«Բարգավաճ Հայաստանը» քաղաքացիական համաձայնության կուսակցություն է: Առաջնորդվելով այն հանրահայտ ճշմարտությամբ, որ մարդը բարձրագույն արժեք է, կուսակցությունն իր գործունեությունը նպատակաուղղելու է «Մարդու կողքին, մարդու միջոցով – մարդու համար» կարգախոսի իրականացմանը:*

*Մենք նպաստելու ենք երկրում ժողովրդավարական կարգերի ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության ձ-ավորմանը, մարդու իրավունքների – հիմնարար ազատությունների պաշտպանությանը:*

*«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կենտրոնամետ քաղաքական ուժ է, որի գործունեությունը խարսխվում է իրատեսության – ողջամտության վրա: Մերժելով ծայրահեղականությունը, քաղաքական արկածախնդրությունն ու դոգմատիզմը, մենք ձգտելու ենք առարկայական – հիմնավոր կերպով լուծել հասարակության առջ-ծառացած հիմնախնդիրները: Համոզված ենք, որ հասարակության զարգացման կար-որագույն երաշխիքը բարոյական – հոգ-որ արժեքային համակարգի առկայությունն է:*

*Ժողովրդավարությանը – ազատականությանը դավանելու, արժեքային նոր համակարգի ձ-ավորմանը նպաստելու ձգտումով հանդերձ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն ազգային – ավանդական արժեքների պահպանության կողմնակից է՝ արժեքային այդ համակարգում կար-որելով ընտանիքը, եկեղեցին – պետությունը:*

## 1. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՈՒՄ

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության հիմնական խնդիրներից մեկը Հայաստանում քաղաքացիական հասարակության, մարդու – քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության – ժողովրդավարական ինստիտուտների վրա հիմնված իրավական պետության կառուցման գործին իր ջանքերի – հնարավորությունների ներդրումն է:

### Քաղաքական կայունություն

Օրենսդիր, գործադիր – դատական իշխանությունների բաժանման – հավասարակշռման սկզբունքների վրա խարսխված քաղաքական կայունության ապահովման նպատակով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. սահմանադրական փոփոխությունների համատեքստում համապատասխան օրենքների – այլ իրավական ակտերի ընդունմամբ իշխանության թ–երի գործունեության հստակ կանոնակարգումը,

2. ժողովրդավարության զարգացման անհրաժեշտությամբ, ինչպես նա–  
ժամանակի պահանջով – պետության առջ– ծառայած հիմնախնդիրների լիարժեք լուծմամբ պայմանավորված սահմանադրական հետագա բարեփոխումների իրականացումը:

Քաղաքացիական համաձայնության վրա հիմնված հասարակական-քաղաքական կայուն հարաբերությունների ձ–ավորման նպատակով, մասնավորապես, անհրաժեշտ ենք համարում՝

- ստեղծել պայմաններ Ազգային ժողովի ընտրությունների 100 տոկոսանոց համամասնական ընտրական համակարգին անցում կատարելու համար,

- նպաստել ընտրական հանձնաժողովների գործունեության թափանցիկության – դրանցում ներկայացված քաղաքական ուժերի պատասխանատվության մակարդակների բարձրացմանը,

- նպաստել հասարակական կազմակերպությունների գործունեության ազատության պահպանմանը,

- կար–որելով ժողովրդավարության զարգացման գործընթացում զանգվածային լրատվամիջոցների՝ որպես բազմակարծության արտահայտման – հասարակական կարծիքի ձ–ավորման կար–որագույն գործիքի դերը, բարելավել նրանց ազատ – անաչառ գործունեության պայմանները,

- օժանդակել քաղաքացիների խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր – ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացմանը:

### Արդյունավետ պետական կառավարում

Պետական վարչարարության բարեփոխման – կատարելագործման նպատակով «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

1. բացառել նախարարությունների, գերատեսչությունների – պետական կառավարման այլ մարմինների կողմից միանման գործառույթների իրականացումը,

2. ընդունել վարչական կանոնակարգ՝ սահմանելով ու հստակեցնելով որոշումներ ընդունելու կարգը – ժամկետները, ինչպես նա – փաստաթղթաշրջանառության – վարչարարության կանոնների խախտման համար պատասխանատվությունը,

3. բարձրացնել պետական մարմինների – պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության մակարդակը՝ արմատավորելով հասարակական վերահսկողության միջազգային փորձը,

4. հնարավորինս կրճատել պետական պաշտոնյաների – ծառայողների թվաքանակը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը – կատարելագործել պետական ծառայողների վարձատրության համակարգը:

### **Կոռուպցիայի կանխարգելում – նվազեցում**

Կոռուպցիայի հաղթահարման բնագավառում անհրաժեշտ ենք համարում՝

1. բարձրացնել պետական վարչարարության արդյունավետությունը,

2. վերացնել պաշտոնատար անձանց – պետական ծառայողների կողմից կամայական որոշումներ ընդունելու հնարավորությունները, հասնել նրան, որ այդ անձինք կատարեն միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով,

3. իրականացնել օրենքների – իրավական ակտերի համալիր փորձաքննություն՝ դրանց «կաշառատարության» իմաստով, հանել այդպիսի դրույթները – վերացնել օրենսդրությունում առկա հակասությունները – երկիմաստությունները,

4. կոռուպցիայի փաստերի հայտնաբերման դեպքում համապատասխան պաշտոնատար անձանց ենթարկել օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության՝ անկախ նրանց զբաղեցրած դիրքից – պաշտոնից,

5. կատարելագործել – խստացնել գույքի, եկամուտների – ծախսերի հայտարարագրման մեխանիզմը,

6. հետ-ողական – համալիր պայքար մղել կոռուպցիայի հետ սերտաճած այնպիսի եր-ույթների դեմ, ինչպիսիք են՝ դրամանենգությունը, ստվերային գործունեությունը, թրաֆիկինգը, կաշառակերությունը – այլն,

7. դատական բարեփոխումների շնորհիվ պարզեցնել պաշտոնատար անձանց – պետական ծառայողների գործողությունների դատական բողոքարկման ընթացակարգը,

8. ներդնել վարչական դատարանների ինստիտուտ – նպաստել դրանց կայացմանը,

9. մշակել – ընդունել հակակոռուպցիոն օրենսդրական փաթեթ:

### **Պայքար հանցավորության դեմ**

Այս բնագավառում, մեր համոզմամբ, պետական քաղաքականությունը պետք է հիմնված լինի օրենքի գերակայության, անկողմնակալության, արդարացի պատժի, պատասխանատվության անխուսափելիության, իրավապահ – դատական մարմինների գործունեության հրապարակայնության – թափանցիկության սկզբունքների վրա:

Հանցավորության դեմ պայքարի ոլորտում «Բարգավաճ Հայաստան» անհրաժեշտ է համարում՝ բարձրացնել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը – հաշվետվողականությունը:

Մենք գիտակցում ենք, որ հանցավորությունն ամբողջովին արմատախիլ անել հնարավոր չէ, բայց – հավատում ենք, որ հիմնավորված, հետ-ողական – լուրջ աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակահատվածում կարելի է մեր երկրում զգալիորեն իջեցնել հանցավորության մակարդակը:

### **Անկախ դատական համակարգի ձ-ավորում – դատախազության համակարգի բարեփոխումներ**

Առանց անկախ, հասարակության հարգանքը վայելող – արդյունավետ դատական համակարգի գոյության հնարավոր չէ կառուցել իրավական պետություն, ձ-ավորել ժողովրդավարական ամուր հասարակություն – լուծել սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներ:

Մեր համոզմամբ, Հայաստանի Հանրապետության դատական համակարգի գործունեությունը պետք է հիմնված լինի արդարադատության հրապարակայնության – թափանցիկության ապահովման, անհատի իրավունքների պաշտպանության – ողջամիտ ժամկետում գործի արդարացի ու հրապարակային դատական քննության սկզբունքների վրա:

Դատավորի կարգավիճակի հստակեցման, նրա անկախության – անկողմնակալության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է ստեղծել դատավորի անձեռնմխելիության ու անփոփոխելիության իրավական, սոցիալական – անհրաժեշտ այլ հիմքեր՝ դրանք հավասարակշռելով պատասխանատվության ապահովման գործուն մեխանիզմներով:

Դատախազական համակարգի բարեփոխումների շրջանակում առաջնային լուծում պահանջող խնդիր ենք համարում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համատեքստում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանն օրենքների կատարման նկատմամբ բարձրագույն հսկողություն իրականացնելու իրավունքի վերապահումը, ինչպես նա – դատախազության մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների պատշաճ կատարման ու անկողմնակալության ապահովումը:

### **Տեղեկատվական հասարակության հիմքերի ձ-ավորում**

«Բարգավաճ Հայաստանը» կար-որում է աշխարհում ընթացող ժամանակակից այն գործընթացներին – միտումներին Հայաստանի մասնակցությունը, որոնք նպատակաուղղված են համընդհանուր բարեկեցության մակարդակի բարձրացմանը – տարբեր քաղաքակրթությունների ու ժողովուրդների միջ- փոխշահավետ կապերի հաստատմանը, խորացմանը – ամրապնդմանը: Այս տեսանկյունից, հաշվի առնելով նա- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանրապետության ներուժը, Կուսակցությունը հաստատակամ է Հայաստանում տեղեկատվական կամ այլ կերպ ասած՝ ապագայի հասարակության հիմքերի ձ-ավորման ուղղությամբ գործնական քայլերի իրականացման հարցում, որի նպատակով առաջիկայում գերակա խնդիրներ է համարում՝

- տեղեկատվական հասարակության զարգացման պայմաններում պետական համալիր ծրագրերի մշակումը, որոնք ուղղված կլինեն գիտելիքի գերակայության վրա հիմնված պետական ու հասարակական կառավարման բարելավմանը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հանրապետության ներուժի բազմապատկումը – դրա արդյունավետ օգտագործումը,
- գիտակրթական – մասնագիտական կարողությունների առավել ամբողջական օգտագործմանն ուղղված ծրագրերի իրականացումը,
- տեղեկատվական համաշխարհային ցանցերին ինտեգրումը – այդ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը,
- տեղեկատվական հասարակության բարիքների մատչելիության մակարդակի բարձրացումը – տեղեկատվական ցանցերից օգտվողների շրջանակի շարունակական ընդլայնումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար ներդրումային, կազմակերպական – ինստիտուցիոնալ բարենպաստ միջավայրի ձ-ավորումը:

## **2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ**

«Բարգավաճ Հայաստանը» նախատեսում է իրականացնել քաղաքացիական հասարակության աջակցության – պաշտպանության քաղաքականություն: Կուսակցությունը համոզված է, որ ազգային – համամարդկային արժեքների վրա հիմնված՝ քաղաքացիների ինքնակազմակերպման ձ-երում է կուտակված հասարակության զարգացման հսկայական ներուժը: Պետությունը պետք է առավելագույնս օգտագործի այդ ներուժը՝ ապահովելով ստեղծագործական – մշակութային միությունների, հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նա– սեփականատերերի, սպառողների, գործատուների, աշխատողների, ազգային, կրոնական – այլ միավորումների գործունեությունը:

### **Տեղական ինքնակառավարման զարգացում**

Հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարումը քաղաքացիական հասարակության հիմքն է, ինչպես նա– պաշտպանելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները – որպես ռազմավարական նպատակ դիտարկելով Հայաստանում տնտեսապես ուժեղ տեղական ինքնակառավարման կայացումը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

1. օրենսդրորեն ամրապնդել տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքները, հստակեցնել պետական կառավարման – տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները – իրավասությունները,

2. բարձրացնել տեղական ընտրությունների նշանակությունը – տեղական ինքնակառավարման մարմիններում ապահովել ժողովրդավարական ներկայացուցչություն, համայնքներում աստիճանաբար անցում կատարել ավագանիների ընտրական խառը՝ մեծամասնական – համամասնական համակարգի, իսկ հետագայում՝ 100 տոկոսանոց համամասնական ընտրական համակարգի,

3. ընդունել Եր–անի կարգավիճակը – մայրաքաղաքի կառավարման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող օրենքներ՝ հստակ տարանջատելով Եր–անի քաղաքապետարանի ու թաղային համայնքների իրավասությունները,

4. ընդլայնել համայնքների բյուջետային եկամուտների մեծացման հնարավորությունները – համայնքների ներդաշնակ զարգացման նպատակով ներդնել ֆինանսական համահարթեցման սկզբունքորեն նոր մեխանիզմներ,

5. վերանայել գույքահարկի ու հողի հարկի հաշվարկման – գանձման մեխանիզմները՝ ապահովելով այդ հարկատեսակների մուտքերի զգալի ավելացում,

6. ուժեղացնել – կատարելագործել պետության – բնակչության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վարչական, ֆինանսական – հասարակական վերահսկողությունը:

### **Աջակցություն հասարակական կազմակերպություններին**

Հասարակական կազմակերպությունների զարգացումը – այդ գործընթացի պետական աջակցությունը, որի ջատագովն է «Բարգավաճ Հայաստանը», թույլ կտա լուծել այնպիսի կար–որ խնդիրներ, ինչպիսիք են՝

- մարդկային գործոնի էական ուժեղացումը, իշխանության ու հասարակության միջ– երկխոսության – տարաբնույթ հարցերի վերաբերյալ հասարակական համաձայնության ձեռքբերման հնարավորությունների մեծացումը,

- բարեփոխումների, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման գործընթացներին քաղաքացիների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը – այդ առումով մասնակցային գործընթացի խթանումը,

- պետության սոցիալական գործառույթների մի մասը հասարակական կազմակերպություններին փոխանցելու – տնտեսության ոչ առ–տրային հատվածում նոր

աշխատատեղեր ստեղծելու հաշվին պետական զգալի միջոցների տնտեսումը, ոչ առ-տրային ծառայությունների շուկայի զարգացումը – այլն:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է՝

1. պետական որոշումների մշակման, քննարկման – կատարման վերահսկողության գործընթացներում ստեղծել հասարակական կազմակերպությունների մասնակցության հնարավորություններ, մասնագիտացված հասարակական կազմակերպություններին ներգրավել սոցիալական – տնտեսական ծրագրերի մշակման գործընթացներին, ինչպես նաև – նպաստել ծնողագուրկ երեխաների, տարեցների, հաշմանդամների, փախստականների հիմնախնդիրների լուծմանը,

2. ապահովել պետական բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացմանը հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը:

### **3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ցանկացած երկրի զարգացման – բարգավաճման հիմնասյուներից մեկը արդյունավետ տնտեսական համակարգի առկայությունն է, որի ձ-ավորմանը կարելի է հասնել նպատակամետ, հետ-ողական, կայուն, կանխատեսելի – հասարակության բոլոր շերտերի օրինական շահերի հաշվեկշռվածությունն ապահովող տնտեսական քաղաքականության իրականացման ճանապարհով:

«Բարգավաճ Չայաստան» կուսակցությունը զարգացման երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման – երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար տնտեսական քաղաքականության ռազմավարական նպատակներ է համարում՝

1. տնտեսական այնպիսի աճի ապահովումը, որը թույլ կտա տնտեսավարման գործընթացում հնարավորինս մեծացնել բնակչության ընդգրկվածությունը – զբաղվածությունը,

2. կառուցվածքային վերափոխումների գործընթացի արագացումը – արտադրողականության ու մրցունակության հենքի վրա արտադրական հարաբերությունների ձ-ավորումը,

3. հարկաբյուջետային – դրամավարկային քաղաքականությունների կայունության, համակարգվածության – թափանցիկության ապահովումը,

4. գործարարության (հատկապես՝ փոքր – միջին ձեռնարկատիրության) զարգացման նպատակով ներդրումային բարենպաստ միջավայրի ձ-ավորումը – երկրի ներդրումային գրավչության մակարդակի բարձրացումը,

5. ստվերային տնտեսության ծավալի նվազեցումը,

6. արտաքին տնտեսական գործունեության ակտիվացումը – արտաքին պարտքի արդյունավետ կառավարումը,

7. մրցակցային առողջ միջավայրի ձ-ավորումն ու սպառողների իրավունքների – օրինական շահերի պաշտպանության իրական մեխանիզմների ներդրումը:

#### **Կառուցվածքային քաղաքականություն**

Կառուցվածքային քաղաքականության գլխավոր նպատակը, մեր համոզմամբ, պետք է հանդիսանա մրցակցային շուկաների ձ-ավորման ու զարգացման սահմանափակումների, խոչընդոտների – արգելքների վերացումը, որն էլ իրական հիմք կդառնա գործարար ակտիվության – ժամանակակից ենթակառուցվածքների վրա հիմնված շուկայական մոդելի ձ-ավորմանն ուղղված կառուցվածքային քաղաքականությանն անցնելու համար: Այդ նպատակով առաջնային են դառնում հետ-յալ հիմնական խնդիրների լուծումը.

1. մասնավորեցման գործընթացի արդյունավետության բարձրացումը՝ առանձնահատուկ մոտեցում ունենալով սոցիալական ենթակառուցվածքի - առողջապահական օբյեկտների նկատմամբ,

2. շուկայական ենթակառուցվածքների (բանկային - ապահովագրական համակարգեր, հաղորդակցության ուղիներ, բորսայական առ-տուր - այլն) զարգացում,

3. ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության զարգացում, բնական մենաշնորհի ոլորտներում ոչ մենաշնորհային հատվածների տարանջատում, բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության սակագնային կարգավորում - նրանց ծախսերի նկատմամբ վերահսկողության կատարելագործում,

4. սնանկացման մեխանիզմների, չափանիշների - ընթացակարգերի վերանայում, դրանց գործնական կիրառելիության ապահովում:

Կառուցվածքային քաղաքականության խնդիրների լուծման հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- տնտեսության ճյուղային օպտիմալ կառուցվածքի ձևավորումը, այդ թվում՝ փոքր - միջին բիզնեսի խթանումը - կապիտալի միջճյուղային վերաբաշխման գործընթացում արժեթղթերի շուկայի դերի բարձրացումը,

- ձեռնարկությունների շահութաբերության բարձրացումը - արհեստական վնասաբերության կանխումը,

- ձեռնարկությունների ինովացիոն (նորարարական) գործունեության խրախուսումը,

- բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգի կատարելագործումը, այդ բնագավառներում բնական մենաշնորհ չհանդիսացող ծառայությունների հակամենաշնորհային կարգավորման յուրահատուկ քաղաքականության իրականացումը,

- ձեռնարկությունների սնանկացման ընթացակարգերի պարզեցումը - կատարելագործումը, անվճարունակ ձեռնարկությունների ֆինանսական առողջացման հնարավորությունների ընդլայնումը - պետական օժանդակության մեխանիզմների ներդրումը,

- արտադրական ենթակառուցվածքների համալիրի բարեփոխումների իրականացումը:

## **Ներդրումային քաղաքականություն**

Հանրապետության ներդրումային ոլորտում առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած ձ-ավորված մակրոտնտեսական - ներքաղաքական հարաբերական կայունությանը, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի - խրախուսող ու պաշտպանող որոշ ենթակառուցվածքների, հարուստ - բավականին հզոր սփյուռքի առկայությանը, ներդրումների առկա ծավալները դեռ-ս հեռու են բավարար լինելուց:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը, մեր համոզմամբ, պետք է հանդիսանա տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձ-ավորման, ներդրումային գրավչության մակարդակի բարձրացման - ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի ապահովումը:

«Բարգավաճ Հայաստանը» ներդրումային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղություններ է դիտարկում՝

- նորարարական (ինովացիոն) քաղաքականության կատարելագործումը - ինովացիոն նախաձեռնությունների խրախուսումը,

- ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական - իրավապայմանագրային դաշտի կայացումն ու կատարելագործումը,

- ներդրումների - ներդրողների շահերի պաշտպանության ապահովումը,

- օտարերկրյա – տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար պայմանների ապահովումը,
- մեծածավալ ներդրումների համար, ինչպես նաև– տնտեսության զարգացման համար որոշիչ, գերակա համարվող ոլորտներում – ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում խստորեն վերահսկելի արտոնությունների տրամադրումը,
- ներդրումային ծրագրերի մշակման – իրականացման հարցում պետական աջակցությունը,
- ներդրումները խթանող ենթակառուցվածքների կայացումը – զարգացումը,
- պետական ներդրումային համալիր ծրագրերի իրականացումը:

### **Հարկային քաղաքականություն**

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության կարծիքով երկրի հարկային համակարգը պետք է սերտորեն կապված լինի տնտեսության կառուցվածքի – տվյալ ժամանակաշրջանում ձևավորված տնտեսական իրական համամասնությունների հետ՝ արտացոլելով ոչ միայն պետության, այլ– գործարար շրջանակների կենսական շահերը: Հարկային – ընդհանրապես ֆինանսական փոխհարաբերություններում պետությունը – հարկատուները պետք է կրեն հավասար – հաշվեկշռված պատասխանատվություն:

«Բարգավաճ Հայաստանը» հանրապետությունում հարկային քաղաքականության կատարելագործման հիմնական խնդիրներ է համարում՝

1. պետության – տնտեսավարող սուբյեկտների շահերի ներդաշնակեցումը – նրանց միջ– հակասությունների մեղմումը,
2. հարկային եկամուտների – համախառն ներքին արդյունքի հարաբերակցության ցուցանիշի մեծացումը (մոտ ապագայում մինչ– 20-25%),
3. տնտեսական աճի ապահովմանը, մասնավորապես՝ ներդրումային ակտիվության բարձրացմանը նպաստող հարկային համակարգի ձևավորումը,
4. տնտեսության իրական հատվածի զարգացման հնարավորությունների, – դրանով պայմանավորված՝ հարկման բազայի ընդլայնումը,
5. հարկային օրենսդրության կատարելագործումը, հարկային օրենսգրքի մշակումն ու ընդունումը:

Տնտեսական վերափոխումների ներկա փուլում որպես հարկային քաղաքականության կատարելագործման գերակա խնդիրներ պետք է համարել ձեռնարկատիրական ակտիվության ուղղությամբ հարկային մեխանիզմի կարգավորիչ – խթանիչ լծակների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև– հարկային բեռի բաշխման արդարացիության – հիմնավորվածության ապահովումը: Այս հիմքով ձևավորված հարկային համակարգը պետք է ապահովի ստվերային տնտեսության նվազագույն – հարկերի հավաքելիության բարձր աստիճան, հարկման բեռի հավասարաչափ բաշխում – հարկերի օպտիմալ դրույքաչափեր, արդյունավետ հարկային վարչարարություն, պետական եկամուտների կանոնավոր հոսքեր:

Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար կար–որում ենք՝

- հարկային վարչարարության արդյունավետության – հարկային մարմիններում (հատկապես դրանց տարածքային ստորաբաժանումներում) ընդգրկված աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացումը,
- օրենսդրության պահանջների պատշաճ կատարման, հարկային քաղաքականության թափանցիկության – կանխատեսելիության ապահովումը, այդ քաղաքականության արդյունքների կանխատեսման մեթոդական հիմքերի կատարելագործումը,
- հարկային օրենսդրության ու քաղաքականության կայունության ապահովումը – հարկման մեխանիզմների շարունակական կատարելագործումը,
- հարկային քաղաքականության մշակման – իրականացման վրա լոբբիստական գործունեության բացասական ազդեցության բացառումը,

- հարկային ապառքների – հարկային անհիմն գերավճարների կուտակման գործընթացի կանխումը,
- հայրենական արտադրության, ինչպես նա – փոքր – միջին ձեռնարկատիրության զարգացման համար հարկային դաշտի բարենպաստության մակարդակի բարձրացումը,
- օրենսդրական դաշտի պարզեցումը – օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների ներդրումը,
- համապատասխան հնարավորությունների ստեղծումից հետո պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների – շահութահարկի նվազագույն պարտադիր վճարների կիրառման պրակտիկայից հրաժարումը,
- հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի – անուղղակի հարկերի միջ-օպտիմալ հարաբերակցության ապահովումը:

### **Բյուջետային քաղաքականություն**

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, արդյունավետ բյուջետային համակարգի ձևավորման նպատակով, առաջնահերթ կարգով անհրաժեշտ է համարում լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում իրականացվող ծախսերի թափանցիկության – հրապարակայնության ապահովումը,
  - բյուջետային համակարգի կայունության մակարդակի բարձրացումը, արտաքին տնտեսական իրավիճակից դրա կախվածության աստիճանի նվազեցումը,
  - բյուջետային քաղաքականության, որպես պետական կապիտալ ներդրումների ընդլայնումը խթանող կար–որ գործիքի, դերի բարձրացումը,
  - բյուջետային գործընթացի կատարելագործումը, դրա արդյունավետության մակարդակի բարձրացումը – բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում սահմանված ծրագրերի, լիազորությունների, ստանձնած պարտավորությունների ու դրանց իրականացման համար նախատեսվող ծախսերի համարժեքության ապահովումը,
  - պետական վարչարարական ապարատի պահպանման ծախսերի հիմնավորվածության ապահովումը,
  - պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքում ներքին աղբյուրների տեսակարար կշռի մեծացումը:
- Այս խնդիրների լուծմանը պետք է հասնել բյուջետային համալիր վերափոխումների միջոցով, հետ–յալ ուղղություններով.
- պետական ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում,
  - բյուջետային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ բյուջետային օրենսգրքի մշակում – ընդունում,
  - բյուջետային գործընթացի – միջբյուջետային հարաբերությունների կատարելագործում,
  - գանձապետական համակարգի զարգացում,
  - բյուջեների – բյուջետային ընթացակարգերի կայունության – թափանցիկության ապահովում,
  - ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում,
  - բյուջետային ծախսերի – պետբյուջեի մակրոտնտեսական համամասնությունների կանխատեսման մեթոդական հիմքերի մշակում – ներդրում,
  - բյուջետային հաշվետվության – վերահսկողության ընթացակարգերի կատարելագործում,
  - ֆինանսատնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների (մասնավորապես՝ հարկաբյուջետային – դրամավարկային քաղաքականությունների) միջ– կոորդինացման մակարդակի բարձրացումը,
  - ֆինանսական կարգապահության ամրապնդում:

Պետության կար-որ խնդիրներից մեկը սեփական վճարունակության ապահովումն է, որի համար անհրաժեշտ է պետության պարտավորությունները համապատասխանեցնել նրա կողմից տնօրինվող ռեսուրսների հետ, – հաշվի առնելով արտաքին պարտավորությունների բարձր մակարդակը, ձգտել բյուջետային դեֆիցիտի կրճատմանը: Այս նպատակով անհրաժեշտ է «գույքագրել» պետության բոլոր պարտավորությունները, անհրաժեշտության դեպքում վերակառուցել ներքին պարտավորությունները – վերացնել չհիմնավորված բյուջետային այն ծախսերը, որոնք մրցակցության համար ստեղծում են անհավասար պայմաններ կամ իրականացվում են բավարար հիմնավորվածություն չունեցող նպատակներով:

### **Դրամավարկային քաղաքականություն**

Դրամավարկային քաղաքականության ոլորտում վերջին տարիների ընթացքում արձանագրվել են որոշակի դրական միտումներ, սակայն դեռ-ս առկա են մի շարք հիմնահարցեր՝ կապված ֆինանսական շուկաների թերզարգացվածության պայմաններում գնաճի կառավարման արդյունավետ մեխանիզմների բացակայության հետ: Հանրապետության սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացման տեսանկյունից դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի գների կայունության ապահովումը, որի համար անհրաժեշտ է ձ-ավորել կանխատեսելի, անհրաժեշտ խորություն ունեցող – «բազմահարկ» ֆինանսական ու վարկային շուկաներ: Այս առումով, անհրաժեշտ է լուծել հետ-յալ հիմնական խնդիրները.

1. ֆինանսական – վարկային շուկաների զարգացում,
2. գների կայունության ապահովում,
3. ազգային դրամի նկատմամբ վստահության աճի ապահովում,
3. գնաճի հիմնավորված մակարդակի սահմանում – դրա կառավարելիության աստիճանի բարձրացում,
4. ազգային դրամի կայունության, դրամական զանգվածի – տնտեսության հնարավորությունների համապատասխանության ապահովում,
5. ֆինանսական շուկայում իրացվելիության մակարդակի բարձրացում:  
«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը դրամավարկային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղություններ է դիտարկում՝
  - տնտեսության զարգացմանը նպաստող արդյունավետ ֆինանսավարկային քաղաքականության մշակումը – իրականացումը,
  - ոչ կանխիկ դրամաշրջանառության ծավալների ընդլայնումը – դրամի փոխարկելիության ապահովումը,
  - բանկային համակարգի նկատմամբ վստահության լիարժեք վերականգնումը – համակարգի կողմից խնայողությունների ներգրավման գործընթացի խթանումը,
  - վարկային դրույքաչափերի նվազեցումը, երկարաժամկետ վարկերի ծավալների մեծացումը – վարկային ռեսուրսների մատչելիության ապահովումը,
  - վարկերի կամավոր ապահովագրության մեխանիզմների ներդրումը – բնակչության ավանդների անվտանգության երաշխիքների համակարգի կատարելագործումը,
  - արժույթային կարգավորման կատարելագործումը – արժույթային օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը,
  - գնաճի նպատակադրման ռեժիմում գնաճի կառավարման ճկունության ապահովումը,
  - վճարահաշվարկային հարաբերությունների բարելավումը,
  - ոլորտի կարգավորման իրավական դաշտի կատարելագործումը:

### **Արժեթղթերի շուկայի զարգացում**

Արժեթղթերի շուկան Հայաստանում մնում է չկայացած, քանի որ այն դեռ-ս չի հանդիսանում խնայողությունների կենտրոնացման, դրանք ներդրումների վերածման – ձեռնարկությունների նկատմամբ արտաքին վերահսկողության իրականացման արդյունավետ միջոց: Այլ խոսքով՝ արժեթղթերի շուկան հանրապետությունում դեռ-ս չի դարձել ինստիտուտների մի այնպիսի համակարգ, որն ի գորու կլիներ կարգավորելու կապիտալի ազատ հոսքերը: Այդ պատճառով, ձեռնարկությունները նման իրավիճակում արժեթղթերի թողարկումը դեռ-ս չեն դիտարկում որպես կապիտալի ներգրավման, իսկ բնակչությունը՝ իր ազատ դրամական միջոցները կապիտալում ներդրման արդյունավետ միջոց:

Այս առումով, արժեթղթերի շուկայի զարգացման հարցում պետական քաղաքականության հիմնական նպատակ պետք է հանդիսանա ինստիտուցիոնալ ներդրողների ու ներդրումների կարիք ունեցող ձեռնարկությունների միջ- կապերի աշխուժացումը – արժեթղթերի շուկայի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը:

«Բարգավաճ Հայաստանի» կարծիքով, արժեթղթերի շուկայում իրականացվող պետական քաղաքականության ռազմավարական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- արժեթղթերի շուկայի բոլոր մասնակիցների շահերի հաշվեկշռվածության – պաշտպանության ապահովումը,
- արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցների միջ- մրցակցության ուժեղացումը,
- արժեթղթեր թողարկողների գործունեության թափանցիկության մակարդակի բարձրացումը,
- արժեթղթերի շուկայում տրանսակցիոն ծախսերի կրճատումը,
- այս շուկայի մասնակիցների ինքնակարգավորիչ մեխանիզմների ակտիվացումը:

### **Արտաքին պարտքի արդյունավետ կառավարում – արտաքին տնտեսական քաղաքականություն**

Հանրապետության արտաքին պարտքի կառավարման համակարգի բարեփոխման ռազմավարական նպատակն ընդհանուր առմամբ պետք է լինի փոխառու միջոցների նկատմամբ երկրի պահանջարկի – այդ փոխառությունների սպասարկման իրական հնարավորությունների միջ- օպտիմալ հաշվեկշռվածության ապահովումը՝ զերծ մնալով ընթացիկ կամ իրավիճակային խնդիրների լուծման նպատակով ՀՀ արտաքին պարտքի մեծացման «գայթակղությունից»:

Նշված ռազմավարական նպատակին հասնելու համար «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

1. ապահովել արտաքին փոխառությունների ներգրավման – օգտագործման թափանցիկությունը,
2. կատարելագործել արտաքին փոխառությունների ներգրավման – օգտագործման նկատմամբ վերահսկողության մեխանիզմը,
3. ստեղծել արտաքին պարտքի կառավարման ճկուն համակարգ,
4. բարձրացնել բյուջետային քաղաքականության – արտաքին պարտքի կառավարման կորրոկցիան – արդյունավետության մակարդակները:

Արտաքին պարտքի կառավարման կատարելագործումը սերտորեն կապված – պայմանավորված է նա- ընդհանուր առմամբ արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորման – այս ոլորտում ազգային անվտանգության ապահովման խնդիրների լուծման հետ: Այս առումով, որպես արտաքին տնտեսական գործունեության ակտիվացման կար-որագույն խնդիրներ պետք է դիտարկվեն՝

1. համաշխարհային տնտեսությանը ՀՀ առավել լայն ինտեգրումը, այլ պետությունների, միջազգային տնտեսական – ֆինանսական կառույցների հետ համագործակցության ակտիվացումը,
2. հայրենական արտադրանքի իրացման շուկաների ընդլայնումը,

3. արտաքին առ-տրի զարգացման – համաշխարհային շուկայում մրցակցության ուժեղացման պայմաններում հայրենական արտադրողների շահերի պաշտպանության ապահովումը,

4. ՀՀ արտաքին պարտավորությունների կրճատմանն ուղղված – հաշվեկշռված տնտեսական քաղաքականության իրականացումը,

5. արժութային կարգավորման – վերահսկողության ոլորտում ներքին շուկայում արտասահմանյան արժութային հաշիվների կրճատման – կապիտալի անվերահսկելի արտահանման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

### **Տնտեսության ապաբյուրոկրատացում – փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցություն**

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման – պետական աջակցության ոլորտներում «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն առաջարկում է հետ-յալ ռազմավարական մոտեցումները:

1. Կրճատել փոքր – միջին ձեռնարկությունների ստուգումներով զբաղվող պետական մարմինների քանակը – հավասարակշռել ու պահպանել կազմակերպությունների – պետության շահերը:

2. Հետ-ողական քաղաքականություն վարել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի կրճատման ուղղությամբ – ձ-ավորել լիցենզավորման այնպիսի համակարգ, որը կլինի խիստ՝ պահանջների կիրարկման մասով, սակայն արագ հաղթահարելի՝ ընթացակարգերի մասով:

3. Բարելավել բոլոր տեսակի ապրանքների – ծառայությունների արտադրության, ներմուծման – արտահանման գծով արտոնագրային մեկ միասնական մարմնի գործունեությունը, բացառել տվյալ ոլորտում գործառնությունների կրկնության – նմանատիպ մյուս եր-ույթները, ինչպես նա- հնարավորինս պարզեցնել արտոնագրման ընթացակարգերը:

4. Վարչական – քրեական օրենսդրությամբ հստակ ամրագրել պետական կառավարման – տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների – պաշտոնատար անձանց պատասխանատվության տեսակներն ու չափերն այն գործողությունների կամ անգործության համար, որոնց հետ-անքով ձեռնարկատերերը կկրեն վնասներ:

5. Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում նախատեսել փոքր – միջին ձեռնարկատիրության համար պետական օժանդակության գումարներ (օգտագործելով այդպիսի օժանդակության բոլոր ձ-երը), որոնք առաջիկայում չպետք է պակաս լինեն տվյալ տարվա բյուջետային ընդհանուր ծախսերի 1 տոկոսից:

6. Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների – ընդհանուր առմամբ ամբողջ երկրի մրցունակության բարձրացման նպատակով վերանայել գործարարության պետական կարգավորման լծակների կիրառման առաջնահերթությունները՝ կարգավորման շեշտը դնելով սուբյեկտների արտադրողականության – արդյունավետության մակարդակների բարձրացման վրա:

7. Ստեղծել լիզինգային հարաբերությունների աջակցության համակարգ՝ փոքր բիզնեսի համար անհրաժեշտ արտադրական սարքավորումները մատչելի դարձնելու նպատակով:

### **Պետական գնումների համակարգի կատարելագործում**

Յուրաքանչյուր տարի բյուջետային ծախսերի զգալի մասը հատկացվում է պետական կարիքների համար ապրանքների գնման – ծառայությունների վճարման համար, ինչը խիստ պարտավորեցնող հանգամանք է պետական ծախսերի կառավարման արդյունավետության ապահովման առումով: Սակայն, իրականությունն այն է, որ այս ծախսերի կատարման գործընթացն, ըստ էության, դուրս է ոչ միայն հասարակության,

այլ- օրենսդիր մարմնի տեսադաշտից ու վերահսկողությունից, ինչն էլ կոռուպցիայի, հովանավորչության, բյուջետային սուղ միջոցների փոշիացման, ձ-ական մրցույթների կազմակերպման - տարաբնույթ այլ չարաշահումների տեղիք է տալիս:

Այս բնագավառում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել իրավիճակը լիովին վերահսկելի դարձնելու - պետական ծախսերի հիմնավորվածության ու արդյունավետության մակարդակները բարձրացնելու ուղղությամբ, մասնավորապես՝

1. վերանայել - կատարելագործել «Գնումների մասին» ՀՀ օրենքը - պետական գնումներին առնչվող օրենսդրական մյուս փաստաթղթերը՝ նպատակ ունենալով բացառել մրցույթների հաղթողների որոշման հարցում սուբյեկտիվիզմի, օրենսդրության շրջանցման - կոռուպցիայի եր-ույթները,

2. մրցութային հանձնաժողովների ձ-ավորման լիազորությունները վերապահել ներկայացուցչական կամ կոլեգիալ մարմիններին, իսկ որոշակի ծավալային կամ գնային ցուցանիշներից բարձր գնումների դեպքում համապատասխան հանձնաժողովների կազմերը ձ-ավորել մրցույթներից մեկ ժամ առաջ,

3. օրենքով հստակ ամրագրել մրցույթներում հաղթող ճանաչվելու դեպքերն ու չափանիշները,

4. պետական գնումների համար իրականացվող մրցույթների կազմակերպման լիազորությունները վերապահել գործառույթային անկախությամբ օժտված պետական մարմին՝ այս գործընթացում ներգրավելով նա- գործարարների ինքնակառավարվող կազմակերպությունների - միությունների ներկայացուցիչներին:

### **Հակամենաշնորհային քաղաքականություն - տնտեսական մրցակցության պաշտպանություն**

Հայաստանի տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը ներկայումս հանդիսանում է մրցակցային դաշտի թույլ պաշտպանությունը - տարբեր հատկանիշներով տնտեսության ճյուղերի ու ոլորտների մենաշնորհացման բարձր մակարդակը: Թե- այս բնագավառում արդեն իսկ ընդունվել են մի շարք օրենքներ, ստեղծվել է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմին - այլև, սակայն տնտեսավարող սուբյեկտների մրցակցային իրավունքների պաշտպանության բնագավառում ձ-ավորված իրավիճակը դեռ-ս մնում է խիստ անմխիթար՝ դրանով իսկ վտանգելով արդյունավետ շուկայական հարաբերությունների հիման վրա ազատական տնտեսության կառուցման հեռանկարը:

Այս նպատակով «Բարգավաճ Հայաստան» առաջարկում է որդեգրել ակտիվ հակամենաշնորհային քաղաքականություն՝ լուծելով հետ-յալ կար-որագույն խնդիրները:

1. Էականորեն բարձրացնել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերը - գործառույթային անկախությունը, նրան օժտել մրցակցության պաշտպանության - ակտիվ հակամենաշնորհային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ բոլոր լիազորություններով, ապահովել պետական մյուս մարմինների - Հանձնաժողովի միջ- տեղեկատվության փոխանակման - համագործակցության մեխանիզմների անխափան գործողությունը:

2. Հստակեցնել - տարանջատել մենաշնորհային - գերիշխող դիրք զբաղեցնող սուբյեկտների գրանցամատյանները, օրենքով սահմանել «մենաշնորհ» ու «գերիշխող դիրք» կարգավիճակների որոշման չափանիշները - դրանց նկատմամբ վարել իրենց կարգավիճակին համարժեք, տարբերակված - հիմնավորված հակամենաշնորհային քաղաքականություն:

3. Ապրանքային նույն շուկաներում պարբերաբար իրականացնել մրցակցային դաշտի ուսումնասիրություններ - վերլուծություններ, այդ թվում՝ նա- վարչատարածքային մակարդակով:

4. Օպերատիվ կերպով վերացնել հանրապետության ներսում կապիտալի - աշխատուժի ազատ տեղաշարժի խոչընդոտները - նպաստել այս բնագավառում տրանսակցիոն ծախսերի նվազեցմանը:

5. Հստակեցնել – հնարավորինս պարզեցնել տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով կիրառվող ընթացակարգերն ու մեխանիզմները:

6. Կարգավորման հատուկ մեխանիզմներ սահմանել փոքր ու միջին ձեռնարկությունների շահերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև – վերանայել գովազդային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունը՝ բացառելով թաքնված գովազդի կիրառման – համապատասխան սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:

7. Հատուկ ուշադրություն դարձնել ներքին շուկայի պաշտպանության հարցերին, որի ուղղությամբ համապատասխան օրենսդրությունն առ այսօր չի կիրառվում՝ հանգեցնելով առանձին շուկաների «դեֆորմացմանը» – հայրենական արտադրողների շահերի ստորադասմանը:

### **Բնական մենաշնորհների գործունեության պետական կարգավորում**

Բնական մենաշնորհի ոլորտների (բաշխիչ ցանցեր, ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում – այլն) պետական կարգավորման համակարգը համեմատաբար կարճ պատմություն ունի մեր հանրապետությունում, ինչը հիմնականում կապված է մրցակցային դաշտի օրենսդրական կանոնակարգման դանդաղ ընթացքի, այս ոլորտների մասնավորեցման արագ տեմպերի – նմանատիպ այլ գործոնների առկայության հետ, որի հետ-անբով բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգը, ըստ էության, դեռ-ս գտնվում է ձ-ավորման փուլում:

Բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորման համակարգի կայացման ու կատարելագործման տեսանկյունից «Բարգավաճ Հայաստան» առաջնային լուծում պահանջող խնդիրների շարքին է դասում՝

1. բնական մենաշնորհների պետական կարգավորման ռազմավարության, սկզբունքների – մեթոդների հստակեցումը,

2. սպառողների համար բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության ապահովումը,

3. բնական մենաշնորհների պետական կարգավորման ռազմավարական նպատակների օրենսդրորեն հստակ ամրագրումը՝ ներառելով հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց – սպառողների շահերի հավասարակշռումը, բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության – հասարակական շահերի գերակայության ապահովումը, ըստ անհրաժեշտության կարգավորման տարբերակված մեթոդների, սկզբունքների – մոտեցումների կիրառումը, բնական մենաշնորհի ոլորտներում ներդրումների խրախուսումը – անվտանգության ապահովումը, ինչպես նաև – հասարակության համար կարգավորման թափանցիկության ապահովումը – այլն,

4. ոլորտի պետական կարգավորման նպատակով գործառույթային անկախությամբ, անհրաժեշտ լծակներով, լիազորություններով, իրավունքներով ու պարտականություններով օժտված մեկ միասնական, անկախ պետական մարմնի ստեղծումը,

5. ոլորտը կանոնակարգող նոր օրենքի մշակումը – ընդունումը՝ դրանում արտացոլելով ոչ միայն կազմակերպական – իրավական կարգավորման նորմերը, այլև – բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից ներդրումների կատարման նորմատիվային կարգավորիչները, ինքնարժեքի ձ-ավորման հարցում անհրաժեշտ սահմանափակումները – այլն:

Որպես բնական մենաշնորհի սուբյեկտների – նրանց գործունեության ոլորտների պետական կարգավորման վերակառուցման հիմնական սկզբունքներ «Բարգավաճ Հայաստան» դիտարկում է՝

- բարեփոխումների ռազմավարության մշակման, քննարկման – կիրարկման թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը՝ այդ գործընթացում ներգրավելով շահագրգիռ բոլոր կողմերին,

- բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների կատարելագործումը, այդ թվում՝ նրանց մենաշնորհային իրավունքները սպառողների շահերի պաշտպանությամբ հակակշռելով – տվյալ սուբյեկտների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության ճանապարհով,
- տեխնոլոգիական համալիրների միասնականության ապահովումը – պահպանումը,
- ոլորտում բարեփոխումների հիմնավորվածության – դրա կիրառման ընթացքում բնական մենաշնորհների գործունեության խաթարման անթույլատրելիության երաշխավորումը,
- տվյալ ոլորտներում տնտեսավարման – քաղաքականության հստակ տարանջատումը:

### **Ստվերային տնտեսության ծավալի կրճատում**

Հայաստանում ստվերային տնտեսության – կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացներին խոչընդոտում են մեր երկրում ժողովրդավարական ինստիտուտների – դատական համակարգի անկատարությունը, քաղաքացիական հասարակության ձ-ավորման դանդաղ տեմպերը, օրենքի գերակայության սկզբունքի՝ ըստ էության անտեսումը, տնտեսության մեջ մենաշնորհացման եր-ույթների առկայությունը, հարկային – մաքսային խիստ, բայց անարդյունավետ վարչարարությունը – բազմաթիվ այլ գործոններ:

Որպես ստվերային տնտեսության դեմ պայքարի ռազմավարական ուղղություններ «Բարգավաճ Հայաստանը» կար-որում – առաջնային է համարում՝

1. ստվերային տնտեսության դեմ պայքարի համալիր ծրագրի մշակումն ու իրականացումը, ինչպես նա- համապատասխան օրենսդրական դաշտի համալրումն ու կատարելագործումը,
2. պայքարի վարչարարական – տնտեսական մեթոդների զուգակցումը՝ առաջնություն տալով ստվերայինության տնտեսական խթանների վերացմանը,
3. ստվերային տնտեսության դեմ պայքարի վարչարարության դիֆերենցումը՝ կիրառելով հասարակությանը հասցվող վնասին համարժեք պատասխանատվության միջոցներ – մեխանիզմներ,
4. համապատասխան օրենսդրական, վարչարարական – կազմակերպական միջոցառումների շնորհիվ հարկման բազայի ընդլայնումը, չարաշահումների տեղիք տվող արտոնությունների վերացումը – ստվերային ոլորտում գործունեություն ծավալելու առումով գործարարների տնտեսական շահագրգռության նվազեցումը,
5. հարկային – մաքսային վարչարարության պարզեցմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակումն ու իրականացումը,
6. տնտեսավարող սուբյեկտների կամ քաղաքացիների կողմից կամավոր, իրենց նախաձեռնությամբ ստվերային դաշտից դուրս գալու դեպքում օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից ազատումը,
7. հարկային – մաքսային վարչարարության բնագավառում այլ (հատկապես՝ հիմնական առ-տրային գործընկեր հանդիսացող) երկրների հետ փոխադարձ համագործակցության ակտիվացումը, մասնավորապես՝ հարկային – մաքսային տեղեկատվության փոխանակման, տնտեսական հանցագործությունների – կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում,
8. ստվերային տնտեսության դեմ պայքարի բոլոր ուժերի կենտրոնացումը – տվյալների ամբողջական, ընդգրկուն տեղեկատվական բազայի ստեղծումը,
9. հասարակության համար բացատրական – տեղեկատվական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ նա- բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ներկայացումը,

10. «փողերի լվացման» – կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության մշակումը – հետ-ողական իրականացումը:

### **Հողի քաղաքացիական շրջանառություն – հողօգտագործման արդյունավետության բարձրացում**

Մենք կարծում ենք, որ հողի (այդ թվում՝ նաև քաղաքային հողերի) նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը կարևոր – անհրաժեշտ ինստիտուտ է, հատկապես՝ դրա գրավադրման միջոցով վարկերի ձեռքբերման, հիպոտեկային մեխանիզմներից օգտվելու, ներդրումների աշխուժացման, ձեռնարկությունների նկատմամբ վարչական ներազդման հնարավորությունների նվազեցման – այլ տեսանկյուններից: Սակայն, հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի ընդլայնման կարևորությունն ու անհրաժեշտությունը չի կարող արդարացնել այս բնագավառում այնպիսի պրակտիկայի կիրառումը, որը ներկայումս հանգեցրել է մի շարք հիմնահարցերի առաջացմանը, մասնավորապես՝ հողերի օտարման ժամանակ ձևական մրցույթների – աճուրդների կազմակերպումը, անհիմն ցածր գներով հողերի օտարումը – այլն:

Հողերի քաղաքացիական շրջանառության – հողօգտագործման բնագավառներում մենք առաջնային ենք համարում հետ-յալ խնդիրների լուծումը՝

1. հողերի գնահատման համակարգի ձևավորումը, հողերի գնահատման շուկայական մեխանիզմների – գնահատման մեթոդոլոգիայի օրենքով ամրագրումը,
2. հողը սոցիալական գործոնից արտադրության գործոնի վերածումը,
3. գյուղատնտեսական հողերի մասնատվածության պատճառների վերացումը – հողակտորների խոշորացման մեխանիզմների – ընթացակարգերի կիրառումը,
4. միավորման կամավորության սկզբունքի հիման վրա գյուղատնտեսական հողերի խոշորացման ճանապարհով հողօգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացումը,
5. հողօգտագործման ենթակառուցվածքների (ոռոգման համակարգերի, տրանսպորտային ցանցի – այլն) վերականգնումը – նորոգումը,
6. լեռնային – սահմանամերձ տարածաշրջաններում հողօգտագործման առանձնահատկությունների հետ կապված հատուկ քաղաքականության մշակումն ու իրականացումը,
7. հողերի քաղաքացիական շրջանառության (այդ թվում՝ անհրաժեշտ սահմանափակումների, իրավունքների – պարտականությունների, պատասխանատվության ձևերի ու տեսակների) հստակ կանոնակարգումը, ինչպես նաև այս հարցում պետական կառավարման – տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հստակ տարանջատումը:

### **Գյուղի վերածնունդ – գյուղատնտեսական քաղաքականություն**

ՀՀ գյուղական համայնքների զարգացման տեսանկյունից առկա են ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ինստիտուցիոնալ, օրենսդրաիրավական, ենթակառուցվածքային, բարոյահոգեբանական – տարաբնույթ մի շարք այլ հիմնախնդիրներ, որոնց հավաքական «բեռի» ծանրությունը ստիպում է խոսել առաջին հերթին ոչ թե գյուղերի զարգացման, այլ գործնականում գյուղական համայնքների վերածննդի մասին:

Այս առումով, որպես ռազմավարական հիմնական նպատակ, մենք տեսնում ենք գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության – արդյունավետության բարձրացումը, ոլորտում տնտեսավարման շուկայական մեխանիզմների – պետական աջակցության ժամանակակից մեթոդների լիարժեք արմատավորումը, ինչպես նաև գյուղի սոցիալական հիմնահարցերի լուծումը, որի համար անհրաժեշտ է՝

1. մշակել – իրականացնել գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագիր, որի բաղկացուցիչ մասը պետք է կազմի ոլորտի պետական աջակցության ծրագիրը (կիրառելով ինչպես պետական գնումների, այնպես էլ դոտացիաների, վարկավորման – հայտնի մյուս մեխանիզմները), որոնք թույլ կտան նա– անուղղակիորեն կարգավորել գյուղմթերքների գները,

2. աջակցել գյուղացիական տնտեսություններին վարկային ռեսուրսների մատչելիության – հասանելիության ապահովման գործում՝ խթանելով հողի գրավադրումը – նպաստելով հողագործության համար վարկային միջոցների «Եժանացմանը» (տվյալ հարցում պետք է հասնել այն բանին, որ գյուղացիական տնտեսությունները կարողանան վարկեր վերցնել կամ պայմանագրեր կնքել հիմնականում ապագա բերքի դիմաց),

3. իրական գործողության մեջ դնել գյուղատնտեսության բնագավառում ապահովագրության մեխանիզմները – պետական երաշխիքներ տրամադրել առ–տրային բանկերին՝ ֆորս-մաժորային իրավիճակներում վարկերի չվերադարձման դեպքում,

4. ակտիվացնել ու խրախուսել հողերի վարձակալության գործընթացը՝ նպատակ ունենալով քաղաքացիական շրջանառության – հողօգտագործման շրջանակներում ընդգրկել մասնավորեցված, ինչպես նա– պետական պահուստային այն հողերը, որոնք տարբեր պատճառներով դեռ–ս չեն օգտագործվում,

5. բարձրացնել գյուղացիական – գյուղացիական կուլեկտիվ տնտեսությունների արտադրության ապրանքայնության մակարդակը – պայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի ապրանքափոխանակության տեսակարար կշիռն աստիճանաբար իջեցնելու – այդ արտադրանքի դրամայնացման մակարդակը բարձրացնելու համար,

6. խրախուսել գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձ–երի զարգացումը – գյուղմթերքների արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների միավորումների ձ–ավորման գործընթացները,

7. պետական աջակցություն ցուցաբերել գյուղարտադրանք արտահանողներին, հնարավորինս կրճատել տարբեր տեսակի «միջնորդների» առկայությունը ոչ միայն ճյուղի արտադրանքի շրջանառության, այլ– արտադրության գործընթացներում, ինչպես նա– ձ–ավորել գյուղմթերքների մեծածախ շուկաներ,

8. հատուկ ուշադրություն դարձնել գյուղական համայնքների արտադրական, ինժեներական – սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը – զարգացմանը,

9. համակարգված պայքար մղել գյուղմթերքների արտադրության – շրջանառության ոլորտներում ռեկետի, չինովսիկական ամենաթողության – մենաշնորհացման եր–ույթների դեմ, որի շնորհիվ կապաշտպանվեն ոչ միայն գյուղմթերք արտադրողների, այլ– սպառողների կենսական շահերը:

